

րելոցն արեամբ գուշակե¹ զնահատակութիւն². եւ զայլոցն պէսպէս ճառագայթիւք ցուցանէր³ զշողումն⁴, որպէս զբազմափայլ⁵ գոյնս լուսաւորութեան առաքինի մարդոց⁶. վասն զի բազում եւ անթիւ են ճգնութիւնք⁷ եւ վաստակք արանց արդարոց⁸:

67 «Եւ վասն զի շարժեցաւ սաստիկ դողորմամբ աթոռն զոր տեսեր, եւ որ երբեմն տղայք քեզ երեւէին, յաճումն կատարելութեան բովանդակեալք, յերկրէ յերկինս թռուցեալ համբարձան⁹, բովանդակապէս¹⁰ զերկրիս կենցաղս արդարոցն եւ ի յերկինս զլինելոց խոցա զհրեշտականման փոխումն եցոյց քեզ պարգեւատուն¹¹ բարեաց: 68 Զանգի իբրեւ զտղայս կացին յաշխարհիս արդարքն անմեղութեամբ¹², չդարձուցանելով ուրեք¹³ զհայեցուածս մտաց իւրեանց՝ ի զբաղմունս նանրութեան, այլ ուշադրեալք ի հրաւիրումն երկնաւոր կոչմանն ուրախութեան հային¹⁴: 69 Զանգի բազում եւ խիստ դողորմունք¹⁵ յայսմ հետէ լինելոց են յաշխարհիս. յարուցմունք թագաւորաց ի վերայ միմեանց, սովք եւ սասանութիւնք եւ բազում նեղութիւնք¹⁶, որք զգալուստ¹⁷ որդւոյն կորստեան նշանակեն, որ եկեալ նստիցի ըստ գրեցելումն¹⁸ ի տեղւոջն սրբութեան, ցուցանելով զինքն Աստուած¹⁹. որ հաշի եւ մաշի ի վերին գաւրութենէն. զոր տէր Յիսուս սատակեսցէ²⁰ հոգւով բերանոյ իւրոյ: 70 Եւ յայնժամ կատարեալ վարուք առաքինութեամբ թռիցեն²¹ արդարքն ի յաւիտենից²² յարկսն եւ այնպէս յամենայն ժամ ընդ

1 ԲԳՄ. ցուցանէ գուշակելով

2 ՁԱՄ. զկատարելութիւն եւ զնահատակութիւն

3 ՁԱՄ. ծանուցանէր

4 Ձ. զշաղկունս

5 ԲԳՄ. որպէս եւ զբազմափայլ

6 ՁԱՄ. մարդոյ

7 ԲԳՄ. բազում են եւ անթիւ ճգնութիւն

8 ԲԳՄ. արդարոց եւ սրբոց

9 ՁԱՄ. ի յերկինս համբառնային

10 ԲԳՄ. բովանդակապէս քեզ

11 ԲԳՄ. փոփոխումն եցոյց պարգեւատուն

12 ԲԳՄ. յաշխարհի կացին արդարքն անմեղութեամբ

13 ԲԳՄ. չդարձուցանելով եւ ոչ ուրեք

14 ԲԳՄ. երկնաւոր ուրախութեանն եւ եթ հային

15 Ձ. բազում եւ խիստ թագաւոր դողորմունք. ԱՄ. բազում եւ խիստ թագաւորոք դողորմունք

16 Ձ. նեղութիւնք-ի փոխանակ ունի ընկղմելութիւնք. «Հին օր. ընկղմելութիւնք» (ծնթ. ԲԳՄ.)

17 ԲԳՄ. զմօտաւոր գալուստ

18 ԲԳՄ. ըստ գրեցելոցն

19 Ձ. աստուած

20 Ձ. սատակեսցէ զնոսա

21 ԲԳՄ. թռչին

22 ՁԱՄ. արդարքն յաւիտենից